կակչիռ կը հռչակէր, գովեստը կը հիւսէ տարազագործական ոստայնանկութեան և վաճառականութեան, և զայն իբր օրինակ կը բերէ արքունի հեղինակութեան և վարչութեան[1]։ Վաճառականութեամբ տեսակ մը ապահարկ պատիւ և արձակութիւն ձեռք բերին Հրեայք՝ նոյն իսկ Հռոմի պէս խիստ ու այլատեաց կեդրոնի մը մէջ[2], ինչպէս և վերջերս ի Բրիտանիա[3] և ի Չինաստան։ Վաճառականութե՛մբ Սամուէլ Մուրատ, Ղարամեանք, Սէթ Արգարեանք և Նուպարեանք մեծացան ի Հնդիկս և յԵգիպտոս, ու կրցան ա՛յնքան բարութիւն կտակել իրենց յաջորդացն ու հասարակութեանց։ Վաճառականութեամբ նշանաւոր հանգիսացան հին Հայերն իբր ամենուրեք՝ աշխարհի չորս մասանց վրայ. բայց անոնք առանին ու ընկերական չատ բարեմասնութեանց վրայ՝ ունէին նաև միսդիկ այն աղուանուշ հոգին, որ կը ներշնչուի կրօնքին վճիտ և խորունկ ալքերէն, որ կուղղէ մարդը մահկանացու երկնային ուղղիչ քանոնով մը և որ՝ հակառակ արդիականաց ոմանց վերացական ու անգործնական ըսելուն՝ կուտայ չատ իրական ու գործնական արդիւնք, սա տարբերութեամբ որ այդ արդիւնք չա՛տ ռէքլամաւոր և պոռոտ չըլլալնուն համար՝ անտես, կը թուին այդպիսեաց համար նաև անգոյ, վսեմ գոյութեանց ճակատագիրն ա՛ս ըլլալով՝ ի պատիժ թերեհաւա՛տ կուրութեանց...։

Վաճառականութիւնն՝ ահա ա՛յս ձևերով և միա՛յն այս ձևերով՝ կարժէ բա՛ն մը, մեծ բան մը, մանաւանդ Բիւզանդիայի պէս գաւառի մը ու Կ. Պոլիսի նման քաղաքի մը՝ երկրագործութեան և վաճառական յարաբերութեանց բարեդէպ վայրերուն մէջ։

---

(1) Պղատոն՝ Քաղաքականութիւն։

(2) Թ. Մոմզըն Պատմութիւն Հռոմէական, Գիրք Ե. Գլ. 11։

(3) Անգղիայի մէջ հրեայ լորտերու Թիւն ցայսօր եօթնի հասած է։